

## ԳՐԱԴԱՐԱՆ

“ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ  
ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ 562 ԼԵԶՈՒՆԵՐԻ”

Ն Ե Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՀՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ — Երևան — 1955, էջ 655

1953 թվականի 16-ին իր մահկանացուն կրկնքէր բազմաթիվ լեզուաբան հայագետ Ակադեմիկոս Հրաչեայ Աճառեան: Ահաւոր կորուստ մը կ'արձանագրէր հայ լեզուաբանութիւնը: Շուրջ կէս դար, ան տրամադրեց իր բոլոր ոյժերը հայ լեզուաբանութեան միջին հարցերը լուծելու աշխատանքին: Մշակեց հայ լեզուաբանութեան բոլոր ճիւղերը, մանաւանդ հայ բարբառագիտութիւնը, հայ ստուգաբանութիւնը և հայ լեզուի պատմութիւնը՝ որոնց անվարան կերպով կրնանք ըսել թէ հիմնադրել հանդիսացաւ: Միջազգային լեզուաբանական մամուլը ակնդէտ կը սպասէր իր խօսքին, հայ լեզուաբանութեան առնչութեամբ: Հաւատարիմ աշակերտը Հրաչեային և Մէլէյի, թրծուած հնգերոպագիտութեան լաւագոյն աւանդութեանց մէջ, ան բարձրացուց հայ լեզուաբանութիւնը գիտական ուսումնասիրութիւններու մակարդակին: Մինչև իր մահը, իր բեղուն վաստակը կը յայտնարէ մեզի գրական լեզուաբան մը և վարժ քեֆ-նիսիէն մը՝ որուն համար հրապոյր չընձեռեցին լեզուաբանութեան տեսական հարցերը: Բայց, իր յետ մահու մեծածաւալ տասը հատորներէ բաղկացած «Լիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի. Համեմատականութեամբ 562 Լեզուներին» անդուգական երկասիրութիւնը կը գնէ գմեղ երջանիկ անակնկալի մը առջև. որովհետև իրապէս, «Լիակատար»ը երևան կը բերէ իր շահագրգռութիւնը լեզուաբանական տեսական հարցերու նկատմամբ ևս: Եզակի գործ մը համաշխարհային լեզուաբանական գրականութեան մէջ. հոն կը շօշափուին, հաւատար հոգածութեամբ և առարկայականութեամբ, Արաւակերէնը (Հարաւային Ամե-

րիկեան լեզու) և Անգլերէնը, Կոլոէններէնը (Ալտակալի բնիկներու լեզու) և Գերմաներէնը, և այլն:

«Լիակատար»ի ներածութեան հատորը կը բաղկանայ 655 էջերէ: Բնականուր մուտք մըն է լեզուաբանական գիտութեանց Գիրքը ունի երկու գլխաւոր բաժանումներ. — Ա. — Լեզուաբանական ներածութիւն. — Բ. — Լեզուներու Դասակարգութիւնը:

Ա. — Լեզուաբանական ներածութիւն, հետեւալ ստորաբաժանումներով. — 1) Ի՞նչ է լեզուաբանութիւնը, 2) Լեզուաբանութեան տեղը գիտութիւններու մէջ, 3) Լեզուաբանութեան կապը ուրիշ գիտութիւններու հետ, 4) Հայերէնի մատուցած ծառայութիւնը գիտութեան, 5) Ի՞նչ է լեզուն, 6) Լեզուի ծագումը, 7) Լեզուի հոգերանական կողմը. ներքին լեզու և արտաքին լեզու, 8) Լեզուն իրր գործիք թանձրացման, 9) Լեզուն իրր գործիք ճշմարտութեան, 10) Լեզուն իրր գործիք համատեղութեան, 11) Լեզուն իրր միջոց յիշողութեան, 12) Լեզուն իրր գործիք վերլուծման, 13) Լեզուի քննադատական կողմը, 14) Լեզուի հասարակական կողմը, 15) Լեզուի փոխանցումը, 16) Լեզուի եղաչրջումը (էփոլոյցիա), 17) Լեզուի կենսաբանութիւնը, 18) Լեզուի յատկութիւնները և կատարելութիւնը, 19) Լեզուի գեղեցկութիւնը, 20) Լեզուի հարստութիւնը, 21) Լեզուի ճոխութիւնը, 22) Լեզուի համառոտութիւնը, 23) Լեզուի սեղմութիւնը, 24) Լեզուի կանոնաւորութիւնը, 25) Լեզուի յատկութիւնը, 26) Լեզուի պարզութիւնը, 27) Լեզուի մաքրութիւնը, 28) Լեզուի յառաջդիմութիւնը և կատարելութիւնը, 29) Օտար ազդեցութիւններ, 30) Անհատական կամքը լեզուի մէջ, 31) Լեզուաբանութեան բաժինները:

1) Ի՞նչ է լեզուաբանութիւնը. — Այն գիտութիւնն է, որ կ'ուսումնասիրէ լեզուներու կեանքը ընդհանրապէս, կը քննէ անոնց կրած փոփոխութիւնները պատմական զանազան շրջաններուն, երևան կը բերէ զանազան շրջաններուն, որոնց համաձայն այն թաքուն օրէնքները՝ որոնց համաձայն կը կատարուին այդ փոփոխութիւնները: Հիմնուելով այդ օրէնքներուն վրայ, կը միջոցաւ անձանցիկ անցեալի մէջ, ու կը ջանայ լուսարանել բոլոր լեզուներու, և առ



հասարակ մարդկային խօսողութեան ծագումը: Սակայն, լեզուաբանութիւնը չի նշանակար այս կամ այն առանձին լեզուի ուսումնասիրութեան հետ: Ծօշափելիէն և մասնաւորէն անդին, ան կը քանայ գտնել այն ընդհանուր օրինաչափութիւնները, որոնք յատուկ են մարդկային լեզուին ընդհանրապէս: Եթէ, զարուհ, լեզուաբանութիւնը կը կոչուէր նաեւ բաղդատական քերականութիւն, ինչ որ իրականութեան չի համապատասխաներ: Հեղինակը միշտ պատմական գեանի վրայ է. թէ և լեզուն ըլլալով հանգերձ պատմական եղափոխութեան ենթակայ ազդակ մը, է իր իսկութեամբ գերազանցապէս համաժամեայ երեոյթ մը: Լեզուն համաժամեայ գոյութիւն մըն է: Լեզուական միութիւն մը ըմբռնելու համար պէտք չունինք անպայման այդ միութեան պատմական եղափոխութեանց գիմելու: Լեզուական միութիւնը այսինչ վայրկեանին գոյութիւն ունի մեր մտքին մէջ, և իբրեւ այդ ըմբռնելի կը դառնայ հասարակութեան մը բոլոր անդամներուն կողմէ: Լեզուաբանութիւնը լեզուական համաժամեայ վիճակներու գիտութիւնն է, ապա կու գայ այդ երեոյթներու պատմական փոփոխութեանց մեկնաբանութիւնը: Աճառեան մեծցած հնգերոպական բաղդատական պատմական լեզուաբանութեան մէջ, հետու մնացած էր լեզուի համաժամեայ ըմբռնումէն, որ արդի կառուցանողական - պաշտօնաւոր լեզուաբանութեան գլխաւոր նուաճումներէն մին է, շնորհիւ Սոսիւրի և Թրուպէքոյի նման լեզուաբաններու: Ապա, հեղինակը կը շարունակէ. «Մարքս Լենինեան լեզուաբանութիւնը չի ընդունում բուրժուական լեզուաբանութեան մէջ գործադրուող պատմական - համեմատական մեթոտը անփերապահօրէն: Խօսելով այդ մեթոտի մասին, Ի. Վ. Ստալինը նշում է որ նա ունի լուրջ թերութիւններ, որոնցից սովետական լեզուաբանութիւնը հրաժարում է: Այնուհետեւ, սովետական լեզուաբանութիւնը ոչ միայն համեմատական քննութեան է ենթարկում լեզուական երեոյթները, այլեւ տեսական վերլուծութիւններ է կատարում և տալիս լեզուի ընդհանուր տեսութիւնը: Սրանով նա արմատապէս տարբերում է

բուրժուական լեզուաբանութիւնը, որ գերազանցապէս փորձառական (էմպիրիկ) գիտութիւն է: Հիմնուած ըլլալով Մարքսիզմ - Լենինիզմի հիմունքների վրայ, սովետական լեզուաբանութիւնը չի կարող մնալ բուրժուական էմպիրիկ գիտութեան աստիճանին: Լեզուաբանութիւնը միաժամանակ եւ տեսական եւ գործնական գիտութիւն է, իսկ համեմատական քերականութիւնը լեզուաբանութեան մի անհրաժեշտ մասն է և ոչ ինքը լեզուաբանութիւնը»: Սակայն, ամբողջ զիրքը հակա - Մարքսեան ուղղութիւն ունի: Ոչ մէկ ակնարկութիւն ի ժամու և ի տարածամու «Մարքսիզմի կոտորակները ուսումնասիրել»: Աճառեան հակա - Մարքսեան մըն է համոզումով: Լեզուաբանութիւնը ըստ հեղինակին պէտք է ուսումնասիրուի անկաշկանդ կերպով, գերձ բոլոր նախապաշարուներէ, և այդ իսկ գիտութեան սեփական օրէնքներով: Աճառեան կը քանայ պահել լեզուաբանութիւնը իր բարձրութեան վրայ, չենթարկելով գայն որեւէ արտա - լեզուաբանական գիտութեան մը անտեղի իշխանութեան, ինչպիսին քաղաքական գիտութեանց կամ ընկերաբանութեան:

Լեզուաբանութիւնը սակայն կը տարբերի լեզուագիտութեանէն և բանասիրութեանէն: Լեզուագիտութիւնը մէկ քանի լեզուներու պարզ ծանօթութիւնն է: Լեզուագիտութիւնը գիտութիւն չէ: Որչեղրկականի վրայ գտնուող շօգնաւերու նաւաստիները առ հասարակ բաղմալեզուագէտ են: Բաղմալեզու երկրներն են Զուրիցերլան, Թուրքիան, Կովկասը, Պարսկաստանը, և այլն: Լեհասայ կարաւանապետները կը խօսէին եւրոպական և ասիական բոլոր լեզուներ: անոնցմէ մին կը խօսէր 98 լեզու: Մեր մէջ առ հասարակ շատ եղած են լեզուագէտներ, բայց քիչ լեզուաբաններ: Լեզուաբանը կը տարբերի լեզուագէտէն որքան բուսաբանը կը տարբերի պարտիզպանէն: Իսկ բանասիրութիւնը կապ ունի ոչ թէ լեզուի, այլ գրուածքի հետ: Մեր մէջ, լեզուաբանութիւն, լեզուագիտութիւն և բանասիրութիւն բառերը իրարու հետ շփոթուած են: Լեզուաբանութիւնը մէկ ու կէս դարու կեանք ունի: Հիմնուող լեզուաբանութիւնը անհամբաւսաղերէ կը բաղկանար: Արդի լեզուաբանութիւնը մեծապէս կը տարբերի հինէն:



2) Լեզուաբանութեան տեղը գիտութիւններու մէջ: — Ոմանք լեզուաբանութիւնը երբեք գիտութիւն չեն համարեր: Տղէտներու գործ: Ասոնք ծանօթ չեն լեզուաբանութեան օրէնքներուն, և նախապաշարուած են հին լեզուաբաններու կողմէ, որոնց համար, իրօք, լեզուաբանութիւնը զուարճալի բառարկերու կոյտ մըն էր: Օրինակ, Սափոր բառը կը մեկնէին իբրեւ «սա ունի փոր», երիտասարդը՝ «եւրից տա» տանց հասեալ է արդ», կանքեղը՝ «կայ անդ եղ», և այլն: Այս բոլորը անցեալի կը պատկանին: Լեզուաբանութիւնը վերջին հարկւրամեակին շատ զարգացաւ, և իր շատ մը կողմերով փորձառական գիտութիւններէ չի տարբերիր: Լեզուաբանութիւնը նոյնիսկ կը կանգնի զբաղան գիտութիւններու շարքին, կիրարկելով հնչարանութեան համար յատկացուած նոր գործիքները:

Ստույգ է որ լեզուաբանութիւնը շատ կէտերով թերի գիտութիւն մըն է, այն պատճառով որ աշխարհիս վրայ այսօր խօսուած լեզուներուն կէսէն աւելին զեռ գրի առնուած չէ: Աշխարհի բոլոր լեզուներուն թիւն է չուրջ 1500 (այլ հաշիւներով՝ 2500), որոնցմէ քերականօրէն քննուած են միայն 600ը, իսկ մնացեալը չէ քննուած տակաւին: Այսպէս են Ամերիկայի, Ովկիանիոյ և Ափրիկէի բնիկներու լեզուները: Արդարեւ, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին, կորսուեցան թուրքերու կողմէ բռնագրաւուած Հայաստանի, Կիլիկիոյ և Փոքր Ասիոյ հայ բարբառները, ոմանք հազիւ թէ քննուած, իսկ ուրիշներ մնացին բոլորովին անծանօթ: Սակայն լեզուաբանութեան մեծագոյն թիրուծիւնը անցեալին կը պատկանի: Եթէ այսօր, այս լուսաւոր դարուն, լեզուներ և բարբառներ կը կորսուին, որքան ժողովուրդներ, լեզուներ և բարբառներ պէտք է կորսուած ըլլան խոր հնութեան մէջ: Այս կորսուած ժողովուրդներէն շատերուն միայն անունները գիտենք: Ոմանք ալ մեզի ծանօթ են լեզուական մանր մունր մնացորդներով, իսկ ուրիշներ անհետ կորսուած են: Գիտութեան համար չափազանց ցաւալի է որ «գիտութեան մայր և դայիակ» հին Յոյները, որոնք գիտութեան և իմաստասիրութեան մէջ նուաճում

ներ արձանագրած էին, բոլորովին անծանօթ մնացած են լեզուաբանութեան: Անոնք Եւրոպայի, Ասիոյ և Ափրիկէի շատ մը ազգերու հետ սերտ յարաբերութիւններ կը մշակէին, բայց երբեք չ'ազուցան անոնց լեզուները ուսումնասիրելու, ըլլան անոնք Թրակացիներ, Փոնտիացիներ կամ Կապադովկացիներ: Հնդկները, ըլլալով հանգերձ սքանչելի լեզուաբաններ, չհետաքրքրուեցան ո՛չ Իրանական լեզուներով, որոնք այնքան մօտիկ էին Հնդկերէնին, ո՛չ Թաթարերէնով, և ո՛չ ալ իրենց զրացի և իրենց նուաճած բնիկ սեամօրթներու լեզուներով: Այս կորուստները անգարմանելի են:

Ապա, Աճառեան յատկօրէն կը պարզէ լեզուաբանութեան ինքնուրոյն նկարագիրը: անիկա պէտք չէ ենթարկուի ոչ Վարքսիտական Դիալեկտիկային» և ոչ մի այլ գիտութեան քմահաճոյքին: «Լեզուաբանութիւնը չի նոյնանում ո՛չ պատմագիտութեան, ո՛չ բնական գիտութիւններին և ո՛չ էլ հոգեբանական գիտութեան հետ. նա մի ինքնուրոյն գիտութիւն է հասարակական գիտութիւններին շարքում: Իբրեւ այդպիսին նա ունի իր սեփական օրէնքները, որոնք նման չեն ո՛չ մասեմատիկայի օրէնքներին, ո՛չ հոգեբանութեան օրէնքներին, ո՛չ Ֆիզիկայի օրէնքներին, ո՛չ էլ քիմիայի կամ մի ուրիշ գիտութեան օրէնքներին: Այս օրէնքները միայն լեզուաբանական են և լեզուներին հին ու նոր վիճակներին համեմատական ուսումնասիրութիւնից հանուած լինելով՝ օգնում են գտնելու բոլոր լեզուներին ընդհանուր օրէնքները»:

3) Լեզուաբանութեան կապը ուրիշ գիտութիւններու հետ: — Լեզուաբանէն կը պահանջուի ընդհանուր ծանօթութեանց պաշար մը: Երբ ան կը քննէ բոյսի մը, քարի մը կամ աստղի մը անունը, պէտք է տեղեակ ըլլայ բուսաբանութեան, հանքաբանութեան և աստղագիտութեան: Սակայն, այս տեսակի ծանօթութիւններէն խոր հրմտութիւն չի պահանջուիր: Լեզուաբանութիւնը աւելի սերտ կապ ունի բանասիրութեան, բնախօսութեան, բնագիտութեան, պատմութեան, աշխարհագրութեան, հնագիտութեան, ազգագրութեան, հոգեբանութեան և ուրիշ գիտութիւններու հետ: Լեզ-



ուարանութիւնը մեծապէս կ'օգտուի այս գիտութիւններէն:

Լեզուներու հնագոյն վիճակներուն կը ծանօթանանք արձանագրութիւններու, դրամներու, պապիրոսներու կամ ձեռագիրներու միջոցաւ: Հարազատը կեղծէն զատորոշել, ձեռագիրներու զանազան տարբերակներէն ուղղագոյն ձեռք որոշել, բանասիրութեան պաշտօնն է: Հին լեզուներու ուսումնասիրութեան առաջին մասը անհրաժեշտօրէն բանասիրական է: Հին լեզուները լաւ բացատրելու և բառերու նշանակութիւններու զարգացումը հասկնալու համար կը պահանջուի հին կեանքի գիտութիւնը, ինչ որ կը սորվեցնեն մեզի հնախօսութիւնը, պատմութիւնը և ազգագրութիւնը: Լեզուներու նոյնիսկ պարզ թուարկումը անհրաժեշտ կը դարձնէ աշխարհագրական տեղեկութիւններու միջամտութիւնը: Առանց այս բոլոր գիտութիւններուն, լեզուաբանութիւնը կը դառնայ մերթ անհամ և զուարճալի բառախաղերու խառնուրդ մը՝ բոլորովին անարժան կրելու գիտութեան անունը: Իր կարգին, լեզուաբանութիւնը կը նպաստէ նաև ուրիշ գիտութիւններու, ինչպէս, 1) Մանկավարժութեան. մանաւանդ լեզուներու ուսուցումը իրմով կ'ընձեռնէ գիւրուսոյց միջոցներ: 2) Գրականութեան. ի մասնաւորի բառերու ձևերը, նշանակութիւնը, ինչպէս նաև ուղղագրական խնդիրները կը յտակէ: Լեզուները բազմաթիւ են, այդ բոլորը ուսումնասիրել մարդկային մէկ կեանքի և մէկ ուղեղի համար անկարելի է: Աւելի գիւրին է ճանչնալ աշխարհի բոլոր բոյսերը և կենդանիները, քան լիակատար կերպով սորվիլ տասնեակ մը լեզուներ՝ որոնցմէ իւրաքանչիւրը 30.000էն 100.000 բառեր կը պարունակէ: Այս պատճառով, լեզուաբանութիւնը բաժնւըւած է զանազան մասնագիտութիւններու, ինչպէս հնդեւրոպական լեզուներու գիտութիւն, սեմական լեզուներու գիտութիւն, նոյնիսկ աւելի մասնաւորիւով, հնդկագիտութիւն, իրանագիտութիւն, սլաւոնագիտութիւն, յունագիտութիւն, արեւելեան լեզուներու գիտութիւն, և այլն: Այդպիսի մասնագիտութիւններէն մէկն է Հայագիտութիւնը, որուն նուիրուած է ներկայ աշխատութիւնը: Պետականութենէ զուրկ

փոքր ազգերու պատկանող մարդիկ, ընդհանրապէս կը սորվին երկու կամ երեք լեզուներ, այն է՝ մայրենի լեզու, պետական լեզու և գիտութեան ու մշակոյթի լեզու:

4) Հայերէնի մատուցած ծառայութիւնը գիտութեան. — Հայերէնի ուսումնասիրութիւնը մեծ ծառայութիւններ կը մատուցանէ ընդհանուր լեզուաբանական գիտութեան:

Հայերէնը թէև իր հնութեամբ չի կրնար բաղդատուիլ ո՛չ Հիթիթերէնի, ո՛չ Հնդկերէնի, ո՛չ Յունարէնի և ո՛չ ալ Լատիներէնի հետ, սակայն ունի գրականութիւն մը՝ որ 15-ու կէս դարեր տեւած է և այսօր ալ անընդհատ կը շարունակուի 40-ի չափ բարբառներով: Այսպէս, ան կը ներկայացնէ միևնոյն լեզուի հին, միջին, նոր և նորագոյն շրջանները: Ան իր հնագոյն շրջաններուն պահած է ձայնադարձի օրէնքը նով վերջացող բառերու հոլովման մէջ (հարսն, հարսին, հարսամբ, հարսուց) ոչ թէ պատահական միացորդներով, այլ կանոնաւորապէս և ընդհանուր ձևով, որով ան հին և արժանահաւատ վկայ մըն է ձայնադարձի գոյութեան, հնդեւրոպական նախալեզուի հոլովման մէջ: Երկու անգամ կրելով ձայնափոխութեան օրէնքը (առաջինը՝ ե. դարէն առաջ և երկրորդը՝ միջին հայերէնի շրջանին), կը ներկայացնէ մեզի այդ օրէնքի ծագման պայմանները, որոնց ուսումնասիրութեամբ կը լուծուին և կը հաստատուին նաև գերմանական խումբի կրկնակի ձայնափոխութեան օրէնքները: Հայաստան և Հայերը շրջապատուած ըլլալով մեծ ու փոքր ժողովուրդներով, փոխառութիւններ կատարած են ուրիշ լեզուներէ, ինչպէս և այլ լեզուներ՝ Հայերէնէն: Ծառ մը Պահլաւերէն բառերու ընթերցումը Հայերէն փոխառութիւններու միջոցաւ կը ստուգուի:

ԱՆՈՒՇԱԿԱՆ ՎՐԴ. ԶԴՋԱՆԵԱՆ  
(Շարունակելի՝ 1)

